առողջ մտքի ազդեցութիւնը ակներեւ է անդամ բոլոր նրանց վրայ, որ դեռ երէկ ժխտում էին այն՝ իր հիմքում իսկ: Անդամ նրանց քաղաքական եւ ընկերային բառարանի մի շարք արտայայտութիւններ փոխ առնուած են երէկի եւ այսօրուան հակառակորդներից, թէեւ ինքնաբուխ, հարազատ չեն եւ այդ իսկ պատճառով նրանց բերնում հնչում են որպէս մուրացածոյ:

Իսկ այսո՞ր: Հետեւեցէք Եւրոպայի մարքսիստների ազգային քաղաքականութեան, այսինքն՝ բոլոր նրանց, որոնք երէկ ի լուր աշխարհի մէկ բերան գոռում էին — «պրոլետարը հայրենիք չունի՞»:

Թողնենք միւսներին մի կողմը, առնենք մարքսիզմի դասական հայրենիքը, Գերմանիան:

Առանց չափազանցութեան կարելի է պնդել, թէ սարեր ու ձորեր են առաջացել այս երկրի սոցիալ-դեմոկրատիայի եւ նրա ղեկավարների մտայնութեան մէջ՝ ինչպէս մի շարք ուրիշ, նոյնպէս նաեւ ազգային քաղաքականութեան խնդրում: Նրանք այսօր ոչ միայն հինցած են համարում եւ միանգամայն ժխտելի՝ «պրոլետարը հայրենիք չունի» նշանախօսքը, այլ հայրենիքը եւ ազգային բարիքները համարում են նախ եւ առաջ նրա, պրոլետարիատի, եւ առհասարակ աշխատաւոր զանգուածների սեփականութիւն:

Աւելին դեռ: Այսօր Գերմանիայում եւ դերման Աւստրիայում գոյութիւն չունի եւ ոչ մի ուրիշ կուսակցութիւն, որ այնպէս մեծ թափով ու հետեւողականութեամբ հետապնդելիս լինի դերման հողերի եւ հատուածների ամբողջացումը, ինչպէս՝ այս երկրի սոցիալ-դեմոկրատիան: Ոչ պակաս չափով նաեւ՝ աւստրիական քոյր կուսակցութիւնը: Ես չեմ մոռացել այդ ուղղութեամբ արտասանուած այն խորը հայրենասիրական ճառերը, որ տարիներ առաջ ընտրական մի պայքարի միջոցին լսեցի այստեղ, Բերլինում, Աւստրիոյ սոցիալ-դեմոկրատիայի անուանի պարագլուխ Օտտո Բաուէրի եւ «Ֆորվէրտս»ի խմբագիր Ֆրիդրիխ Շտամֆէրի բերնից:

Մի ուրիշ օրինակ: Երկու երեք տարի առաջ հիմնուած դերման-աւստրիական ժողովրդային միութեան մասնակի նպատակն է՝ հետապնդել այդ երկու դերման երկիրների միացումը, աւելի շուտ՝ Աւստրիոյ կցումը Գերմանիային Իսկ այդ միութեան հիմնադիր-ղեկավարների առաջին շարքերում է գտնուում ոչ այլ ոք, քան Ռայխսթագի նախագահ եւ դերման սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխ Պաուլ Լէօբէն: Նրա գործակիցներն էլ մի խոշոր չափով ընկերվարականներ են: Եւ նրանք բոլորը ամէն պատեհ առիթով բանաւոր ու գրաւոր պրոպագանդ են մղում այդ գաղափարի շուրջը: Եւ այս՝ պարտուած Գերմանիայում եւ Աւստրիայում, Վերսայլի դաշնագրից յետոյ:

Կարճ, «Միացեալ Գերմանիայի» դրօշակակիրները այսօր դերազանցօրէն մարքսիստներ եւ ընկերվարականներ են: Նրանք հարկադրուած են յաճախ մինչեւ իսկ պայքար մղել, այդ գաղափարի համար, ընդդէմ քաղքենի տարրերի: Ուրիշ խօսքով, ինչ որ ըստ էութեան տարիներ առաջ հետապնդում էին համագերմանականները, այս օր իւրացրել են ընկերվարականները, միայն թէ «համագերմանականութիւն» նշանախօսքը փոխարինել են, «Մեծ Գերմանիա» (Grossdeutschland) աւելի առողջ եւ իրական նշանախօսքով:

Մեծ կամ Միացեալ Գերմանիան է որ, ըստ դերման ընկերվարականների, իր մէջ պիտի առնի ոչ միայն Աւստրիան, այլ եւ Գերմանիայից զատուած մի քանի ուրիշ դաւառներ եւս, յատկապէս արեւելեան սահմանների վրայ:

Դաւաճանե՞լ են դերման եւ աւստրիական ընկերվարականները, որդեգրելով ազգային նոր, առողջ քաղաքականութիւն, թէ՞ այժմ են կեցել ուղիղ ճամբու վրայ, յարմարուելով իրականութեան, ինչպէս եւ դաղափարների աշխարհում կատարուող հզօր բնաջրջման (էվոլիւցիա) օրէնքին: Ի հարկէ վերջինս է ճըշմարիտը: Եւ այսպէս վարուելով նրանք ոտք են դրել իրապաշտ քաղաքականութեան դետնի վրայ:

Ի՞նչ խօսք, նրանք չեն պնդում, թէ վաղը կամ միւս օրը իրականանայ պիտի Միացեալ Գերմանիան: Ոչ էլ դրա համար սուսեր են ճօճում օդի մէջ, ռազմի ծրագիրներ սրոճում: Բնա՛ւ: Ո՞ր կուսակցութիւնն է աւելի հաշտա-